

թիւն նա՛ր բնեւեակայ: Զարձակ բնութիւն,  
նա՛ր թողացոյց: Կապեալ զարձակ բնու-  
թիւն որ փաստեցաւ ի լուծութեան իւրում:  
Կին այն կին արդարոյ, լոյծ եւ իշխան էին  
կամք իւր, արար զնա ազարձան, բնու-  
թիւն կապեալ արար զնա, զի եղիցի եր-  
կնչեւ(¹) ազատութիւն մեր, զի մի կա-  
պեցէ զնա որ արձակն արար ելոյծ եւ  
զբնութիւն կապեալ: Եղև պատգամն աւժ  
եւ խաղաց, զի կապեալ բնութեանքն զոր  
ելոյծ, երկեցուցէ՛ զմիտս արձակս: Բայց  
այլք եւս ի միջի, ահա շփոթեալք են եւ  
բազումք: Քաղցրացոյց զշուքս զառիւնս, եւ  
ելոյծ եւ փոխեալ զգառնութիւնս ի գառ-  
նանայն(²) եւ ի քաղցրանայն զնոսրն եւ  
զնոյն ջուրս փոփոխեաց: Զին ակնարկեաց  
եւ եղին զառիւնք, եւ ակնարկեաց եւ ն-  
զին քաղցունք: Եւ ոչ ակնարկելով պաշ-  
տի, զի կամելով առնէ դամնայն: Քաղց-  
րացոյց զգառնութիւնն, զի ուսցի ժողո-  
վուրդն դառն, թէ զաւրութիւնն որ յաղ-  
թեաց բնութեանց քարկացուցանէին կամց  
իւրեանց: Զարութիւն որ բռնագատէ դը-  
բնութիւնս, ողորկաց յանապատին զա-  
զատութիւնս, Ընդէ՛ր ոչ քաղցրացոյց բնու-  
թիւն իւր զգառնութիւն ազատութեան:  
Ոչ շփոթեաց զյարմարութեան զիտակ այն  
որոշմանց: Այլ բնութիւնս եցոյց զբնու-  
թիւնս, եւ առ ազատութիւնս զխոստ-  
մունս պարզելի: Զբնութեան քանզի ազատ  
է, խոստմամբք ողորկէ: Զբնութիւն իւր-  
եւս զմոռալ վարէր զնա բռնութեամբ:  
Եւ եթէ կամք մեր, իւրովին ոչ արդարա-  
նայ, զատարկ է: Զի զբնեւէ է ի շահէ,  
որ զիսէ յազատութեանէ իւրմէ ի նմա, զի  
մի կարծեսցուք զկարգէն թէ ոչ կարէ  
տալ զազատութիւն: Ետ խոստումն զթու-  
թեամբ իւրով, զի ցուցցուք մեք զբնութեան  
մեր: Ընդատուցանէ զմեզ եւ բռնութեամբ,  
զի թաքոյց զոյժ իւր ազատութիւն մեր:  
Գայ բարկութիւն յանդիմանէ զնա, ցու-  
ցանէ՛ զոյժն որ ծածկեալն է ի նմա: Եթէ  
կայ գաւազան ի վերայ գլխոյ, ժողով՛ մը-  
րութեամբ զարմտիս իւր: Գործամ բախէ  
բարկութիւն զզբնութեան նորա, երեւի՛ ոյժ  
իւր աւաքնութեամբ:

Հապաքակեաց

Յ. Յ. Մ.

## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ՎԱՐԴԱՎԱՌ

Վարդավառ Ս. Յակոբի մէջ մասնաւոր նա-  
ղիսութեամբ կը տօնախմբուի. որովհետեւ աւան-  
դօրէն այնպէս ընդունուած է թէ Տեառնեղբայր  
Յակոբոս Առաքեալ, որ առաջին եպիսկոպոսն է  
նրուսաղէմի եւ միանգամայն պաշտպանը Ս. Ա-  
թոռի, իր առաջին պատարագը մատուցած ըլ-  
լայ Պայծառակերպութեան տօնին: Այս պատճա-  
ռով, նարայն երեկոյ, կիրակման Ժամերգութե-  
նէն ետքը, նախատօնակ ալ կը կատարուի եւ  
Քրիստոս Աստուած մեր ժողովանքին մէջ յատ-  
կապէս կը յիշատակուի Տեառնեղբոր անունը:  
Այս աւանդութեան յիշատակին, երուսաղէմի  
մէջ Վարդավառն տօնին նանդիսագիտն ու պա-  
տարագիւն է Սրբոց Յակոբեանց Աթոռն Ամին.  
եւ Ս. Գահակալը: Այս պատարագի յիշատակին է  
նաեւ որ կիրակի առաւել կը հաղորդուին ժա-  
ռանդաւորաց Վարժաբանին բոլոր ուսանողները:

Թէ՛ միարանութեան եւ թէ՛ ժողովուրդին  
համար անխառն հրեշտակներ պարագայ մըն էր  
որ ն. Ամին. Սրբազնութիւնը, Տ. եղիշէ Արք-  
եպս. Դուբան, երկու տարիէ ի վեր, իր հի-  
ւանդութեան հետեւանքով կ'զգուշանար ծանր  
յոգնութիւններէ, եւ այսօր, առաջին անգամ կը  
կարողանար Ս. Պատարագ մատուցանել եւ մի-  
անգամայն Տեառնեղբութիւն կատարել երկու  
արժանաւոր երիտասարդներու վրայ, աւելցնե-  
լով Պայծառակերպութեան տօնին շուքը իր օրհ-  
նարներ հանդիսադրութեամբ: Այս յոգնութիւնը  
նոյն ատեն առիթ մը եղաւ փորձելու ն. Ս. Սրբ-  
բազնութեան վերահաստատուած ցանկալի  
առողջութիւնը, եւ շատ ուրախ ենք որ այս բարդ  
պայտամուտներու պատճառած պարտասուսեմե-  
րու մէջէն արի եւ զուարթ հոգեով զուրս ելաւ  
Ս. Պատրիարքը:

Հայ հեթանոսութեան յուշերէն մէկը, ի-  
բարու վրայ ջուր սրսկելու արարողութիւնն ալ  
մեացած է Ս. Յակոբի մէջ: Հայ ժողովուրդը՝  
Ջրագառնի սիրուն բառով կը բացայայտէ Վար-  
դավառը, եւ Վարդավառն անպատճառ իրարու  
վրայ ջուր սրսկելու առիթ մը կը գտնեն Հայեր,  
թէեւ այլեւս դրօսանքի եւ կատակի ձեւին տակ:  
Բայց հոս, Ս. Յակոբի մէջ, Վարդավառի առ-  
տուն, Անդաստանէն ետքը, Ս. Աթոռիս Լուսա-  
բարագետը, վարդաշուրի մէջ ուսանիլ փունջ  
մը թաթխելով կը ցօղէ եկեղեցականներու, ժա-  
ռանդաւորներու եւ ժողովուրդեան վրայ, անուշիտ  
վերականգնացներու համար ջուրը պէս կենսա-  
կան, օրհնեալ տարրի մը մասին հինքուն կողմէ  
պաշտամունքի հասած ըմբռնումը, ո՛րչափ ալ  
նոյեան Ջրեղեղին աստուածաստատ մեկնու-  
թիւնն ալ լծորդուած ըլլայ Ջրագառնի յիշա-  
տակին:

(¹) Օր. ունէր՝ կնէկ, զոր ուղղէ սրբազրին զը-  
նելով եւ ի վերայ քառից:

(²) Օր. ունի վրիպանօք՝ ի դառնայն:

## Կ Ո Չ Ո Ւ Մ Ը

Ըօինք թէ Ս. Պատրիարք Հայրը Ձեռնադրութիւն ալ կատարեց: Ձեռնադրութեան արարողութիւնը յուզիչ է. ցնցիչ է: ԿՈՉՈՒՄձ Կ'սկսի արարողութիւնը:

Կոչումը հրապարակային հարցաքննութիւնն է Ընծայեալին: Ձեռնադրիչ եպիսկոպոսը, իբրեւ թէ առաջնական ծանօթ չէ իրեն ներկայացուողին, մանրամասն հարցափորձի կ'ենթարկէ անոր մնունդը ու անունը, անոր անցեալն ու ներկայն, անոր պատրաստութիւնը և գիտակցութիւնը ապագային: այսինքն առաջըրուած պաշտօնի մասին: Ըստ ինքեան շատ փափուկ և միանգամայն շատ անհրաժեշտ այս քննութիւնը կատարելէ ետքն է որ կը կոչէ ընծայեալը, և անոր ուղղափառութիւնը մանր հարցաքննելէ յետոյ, Կ'ազօթէ անոր իրայն և անոր համար, և կը պատրաստէ զայն ձեռնադրութեան և օծումի:

Եթէ Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ Կոչումը պարզ ձևակերպութեան մը վերածուած չի լինէր, ինքնին ազանջութեամբ կ'ըլլար մեր եկեղեցւոյն բարեկարգութեան առաջին և հիմնական պայմաններէն մէկը, այսինքն՝ պատրաստուած և արժանիք չիմած անձերուն կոչումը հոգեոր պաշտօնին:

Կուրջ խնդիր մըն է ո՞նչ Ձեռնադրիչ համար կրօնքի խորհրդաւոր չեմքն ներս առնել այնպիսիներ որ պահանջուած արժանիք չեն չիմած անմասնօր պատրաստութեամբ և գիտակցութեամբ: Վասնից Ձեռնադրութիւնը ասոր կամ անոր սքեմ հազցնելու արարողութիւն մը չէ, այլ կրօնականացած, հոգեւորացած էութեան մը կոչումը սրբազորելու խորհուրդն է ան՝ ազօթքով, ձեռնադրութեամբ և օծումով սրբալոյս անուանել, և այս կերպով անոր ընդունումը (initiation) քրիստոնէական ընկերութեան մէջ, ըլլալու համար խորհրդածուէն բո՛ւն կրօնքին, բո՛ւն հոգեոր կեանքին:

Ձեռնադրութեան եկող մը, մինչև որ չունենայ գիտակցութիւնը իր կոչումին, կարելի չէ որ բան մը հասկնայ կրօնքին և իր ստանձնած պաշտօնին և կարենայ բան մը հասկցնել ուրիշներուն: Այս է պատճառը որ մենք կը չեշտենք պատրաստութիւն և արժանիք բառերը: Միայն զպրօքի պատրաստութիւնը չէ՛ այդ, միայն զարգացած և մասնագիտօրէն զարգացած մարդու մը արժանիքը չէ այդ, այլ ասոնցմէ աւելի վեր բան մը. հոգիին պատրաստութիւնը, հոգիին հոգեւորացումն է այն, նուիրեալին ներքին մարդուն, անոր էութեան կրօնականացումն է այն, որ նկարագրի կամ բարացուցականն է բուն և եկեղեցականին: Պայծառակերպութեան օտնին խորհուրդը պատշաճեցնելով պիտի բռնէինք, պայծառակերպուած հոգի՛ն է ինչ որ կ'ուզենք հասկցնել կրօնականացած կամ եկեղեցւոյցած եղի խօսքերով:

Ս. Պատրիարք Հայրը Յունիս 21 Շր. երեկոյ

Ս. Յակոբայ տաճարին մէջ, հարցաքննեց մասնագետաց վարձարանէն չըմանաւորաբար կու երկաստարներ, նորայր և ներսէս սարկաւազները, խորտափիլակութեամբ Լուսարարապետ Գեր. Մեսրոպ Եպի. Նշանեանի, իբրեւ թէ նորերները եղած ըլլային անոնք, իբրեւ թէ իր ձեռքին և իր շունչին տակ պատրաստուած չըլլային: Հրապարակային հարցաքննութեան մէջ արժանիք են վկայութիւնը մեր ամենուն գիտակցութեանն է որ կը հաստատայ իբրեւ:

Կոչման արարողութիւնը ստուգելու արտադրէր: Գի Ձայնէն՝ Նայեալցի մեզ շարականով Կ'սկսի ան, և իմէ երգութիւն այնպէս ինչպէս որ Գեորգ Գ. թէ Ձեռնադրութեան Մաշտոցին մէջ խաղաղութեամբ է, — և մեր աղաք ոգևորուած երգեցին զայն իրենց ուսուցչին, Տիար Լեւոն Ձիլին: Կրեանի վարձ առաջնորդութեամբ — հաւատքն և անեղիքն հոսող մեղեդիի մը պէս կը ծաւալի, և այդ վերացնող եղանակին հետ նուիրեալ ձագին կը վերանայ և կը միանայ Քրիստոսին, որ բազմագոյթ է, որ Հայրն է որբերուն և Դատաւորը այրիներուն, որ Գոսկ կը զնէ սուրբ զրուսներու իրայն:

Ընծայեալները բարձրամայն խոստացան գիմանալ աղբարտութեան, անօթութեան, ծարաւի, վիշտի, հալածանքի, նախատինքի, շարժաբանքի զխան Քրիստոսին, այդ պատկը խելլու համար Քրիստոսի ձեռքն և ուխտեցին իրենց կառողութեան չափով անձանքը զկալ ի պաշտօն Աստուծոյ և Աստուծոյ գործը չխափանել մարմնաւոր գործի սիրուն, խոստացան հետեւել Քրիստոնէական ընդհանուր եկեղեցւոյ նշանաւոր և ուղղափառ հայրերուն, ինչպէս նաեւ Հայց. Եկեղեցւոյ երեւելի վարդապետներուն: Լուսաւորչէն սկսեալ մինչև Ենոթալի և Գր. Տաթևացի:

Քրիստոսի եկեղեցւոյն ամբողջ պատմութիւնն էր որ արագ արագ կ'անցնէր մարքի հորիզոնէն պատմական պատկերախաղի մը երկրին պէս, երբ Քրիստոսի եկեղեցին խոսովոյ զէմբերու անունները կը յիշուէին և կը նշովուէին ու երբ միւս կողմէն ուղղափառ հաւատքին վարդապետներն ու արդար պահապանները կը յիշատակուէին յաւերժական օրհնութիւններու յորդումներով:

Սրբապան հարցաքննիչն ու կոչողը կարգաց նուիրեալներուն ուխտը սրբազորեց ազօթքը՝ կոչելով Ս. Հոգին, որպէս զի բանայ այս ընծայեալներու մարին իրայն յաշուած վարագործը՝ հանչեալու համար Քրիստոսի ատուածութիւնը: Նայն ինքն Տէր Յիսուսը:

## Ձ Ե Ռ Ն Ա Գ Ի Ռ Ի Թ Ի Ն

1928 Յունիս 22, Կիրակի առտու, Պայծառակերպութեան օտնին յուսեղէն յիշատակներուն մէջ, Ս. Պատրիարք Հայրը կատարեց Ձեռնադրութեան խորհուրդը: Ս. Յակոբայ տաճարը կը ցնծար կանթիլի և մօմի պտղուն լոյսերուն հետ պատուահաններէն ներս խառնող չողողուն արիւի առատ լոյսերուն և խառնիկ բուրմունքին

Տէ՛գ: Լուսարարացիներ Սրբազան ամէն հոգ ու  
խնամք տարած էք նախապէս որ մեծօրայեկուհի  
ըլլայ հանդէսին արարողական կարգուստրբը:

[illegible]

Սրբազնագործ Չեռնադրիչը իր աղօթքով և Չեռնազրուխեամբ քանախայացուց բնակչաշենքեր և օրհնեցով անոնք քանախայեան գաղաժեւանք, կերակց աւրբ պաշտօնին որտաքին վայելուչ ձեւեր ալ, և կարգաց յիբին աղօթին օրհնութեան, նարեկացոյն Աղաչեմ զանդաւոյնի աւետիկներ, որ թէև բարոյիչներուն նամար գրեալ է, որդեպի ատով գործան թաւրդի սիրիւր, բայց պատշաճօրն քրտած է նոր

Ս. Գառնաբերը, խոր զգացումով աշնանը  
լի չէլստով մեզ էր կարգայ միշտ այս ազգիքը, հ  
այս անգամ յառնեկայ կարգայ զայն կամ եր-  
գեց, զնեցով ասոր մէն մի քառն մէջ իր հո-  
գին և ներշնչելով ազգիքին ոգին թէ՛ ձեռնա-  
բուսածներուն և թէ՛ փողովներուն:

Աղօթքէն ետքը դպրաց զտող զսոաց ասա-  
ջին Խորհուրդ խորինը նորընծաներուն զգեա-  
տաւորման:

Ս. Յակոբի գանձատան գեղեցիկ զդեսաներով  
հանգեցրած և եկան անոնք բեմի վրայ, և Ս.  
Պատրիարք Հայրը բազմած սեղեսոմ աթոռին, իր  
հայրապետական բոլոր նստաթեան մէջ, սկսաւ  
խօսել:

44022

Քաթար լեռան գլխից կանխող պարտաները պատկերացրել էձեր Առեւտրանի պատմութեամբ, բայտ րէմարցիկ տա հասարակ այնպէս կը կարծեն որ երկինքին՝ Քաղաւորութիւն անկողի աշխարհի վերաբերեալ խոստում մըն է հաւատացողներու համար. քնդհանրապէր Առեւտրանին մեկի բերած նորութիւն այն է որ երկինքին Քաղաւորութիւնը այս աշխարհի վրայ գիտի կրնան վայելել մարդիկ, ճերխ է որ քնդողներէ յըրան Յիւստաւոյն իսկ ակնարկելով իր մօտ գնացողներէն մտանք, բայտ պիտի չմտնեն առանց մեկնել որ ոչ չանեն Առստոյն Քաղաւորութիւնը. Քաթար լեռան վրայ ձեկի ունեցող յաւառող իրականութիւնը մէկ հառապէն էր երկինքի Քաղաւորութեան, որ արեւելքա մեւ Փրկչին առաւելեմներէն երեկին, որ իջլ որ աւելի կարող էր ունի, անցըր կը յաւըրքնէ Առստոյն ձայնը եւ անցեալը կը ներկայանայ հոն իր վառներով, իստակցութիւնը՝ նին դէմքերա եւ Առստոյն սերելի որդայն միջեւ՝ կը պատկայ այս վերջնայն մահուան շուրջը. մանր արեւից րէ չէ Առստոյն Քաղաւորութեան. վառց որ մանր արեւաբանական վեր-

յին լուծումն է կեանքի հանդոյցներուն, որմ ոչ ոք  
կրնայ խուսափիլ իրեն մօրէ, և հոյն իսկ շտապ-  
փեցաւ Աստուծոյկին, և Պայծառակերպութիւնը ցոյց  
տուաւ թէ այս կեանքի մէջ հնարաւորսիւն կայ եւ-  
կիմիկ կամ Աստուծի Քաղաւորսիւնը իւրօրոճելու,  
զոր ամէն հաւատացեալը հոգի պիտի պայր իր հոգւոյն  
խօրքը, ինչպէս անգամ մը դիտել տուաւ Տիտուս-Բրիտ-  
տան: Միտե՛րէ՛կ առանց նեղացնելու հանդերձեալ կեան-  
քի մը պահումով խոստումներն ու պատկերներ կեանքը ա-  
մանագնա ապրողներէ համար, կ'որժէ որ խիստնեա-  
նէն այս կեանքի հաւառ տպանովում Քաղաքի պայծա-  
ռակերպութիւնները նեղք բերեն:

11. Պատերազմը այս ոգով քնդպանեց իր հարգը, մասնաւոր, վնիս առաւելի մը խօսողունը գրգռելով իր խառնամելին մէջ, Էւ մեր եւր հայերէնին ճարձղ առաս եւ անբնդհան հասան մը, ուժովցած կոհեակութեան խոր հնդդներու եւ իմաստասիրական հայեցողութիւններու կիսաւաճմով: Դ. Մրցաւորութիւնը խօսելու ասեմ, իր վերացումի պահերուն, աչիւր կը փակէ մերք ընդ մերք, եւ առաւանակի մը նման բող կուսայ իր ձեփին քա խէր անմուն տապաւնդին մէջ, յոյս չեփիւրէր յա- վրաստանումի մը պէս, եւ այդ պահերէն է որ իր հայե- լիւնին բառապատերեր կը պարզուի եւ բառեր կը հարկեն իրենց իմաստները գտնելու այդ խորհուրդներու քա խէփին մէջ եւ կով իմաստներ եւ իմաստասիրական խորհուրդներ իրենց պատահաւ բառերով կը մարմնաւան ալդ վերա- գումի պահերուն, եւ այդպէս Տախաւանկած խօսքեր առ տաղանդամներ, օտկնելեր հայապատարկներ, կեն- դանի պակկներէ կ'ստեղծեն եւ շնորհալի բաննարացու- ներ կուսան իր խորհուրդներուն եւ հայեցողութիւննե- րուն եւ ասան կենդանի, ոգեւոր պակկներու պէս կը կուսան մաշակի կը դառնան ուժիւ ունկնդիրներու ձեփին:

ՉԵՌՆԱԳՐԵԱԼՆԵՐ

Արագան Բարեզիչը Վարդավառի սօսին բխա-  
նեալանք պաշտօնացնելէ ետք, անդադարձաւ Չե-  
մաղբեալներուն, իր հայրական հրճումանն ու զմահա-  
սանք յայտնել ամենը, որ իրենց էրեսաստարկեան  
ժողովներուն մէջ — երկուսն ալ 24 տարեկան — պաշ-  
տան աներգուած կը հովառնէին խառն Բաղադուր-  
քան: Եւս սուր անհաղիմ մը իւր զարմանք յայտնել  
անոնց որ չտիկն առելի կ'աւելորայրին կուսան աշ-  
խարհը, եւ բառ յսակ կ'երգով՝ ինչ է եղեր այն  
աշխարհը, զոր կ'առնի պիտի չլլայր եկեր զոնկ ա-  
ւելի անդամական, աւելի բարձր հասակական: . . .

Մարիա աղաքիցնը, դիտկ տաւա, իր ծագման մէջ պատճառ մըն էր կեանքնեմ համար զանոնք, որ հոցի համար միայն կը դեղերէն արքայալին շուրջը: Ժամանակը բարեփոխեց այդ պատճառը եւ սարկաւորներ մտեցաւ Առսաւոյ տեղանին:

Եւ ահա այս մէր սիրելի որդիներուն պատահական հայերը, որոնք Առաւմտյան զանգին ծառայութեան համար լիարժեք առած են, իրենց խիստ նշուով մասն ածողը բնական է բերին ընծայելին զանազան արքայական տեսակներ

II. Պատկա՞րք արագին գրուածի՞ր ըստ երկու պատմական փաստաներուն, Տէր Ներսէսի եւ Տէր Գաւրգինի, որո՞ւմ, ըստ, հաւասարի՞մ եղան իրենց ծառա-



տերազմին հետեւանքով Անթէլի հայութիւնն ալ տեղահան կ'ըլլայ, եւ իրենց կ'իշխան Համայնի եւ Սլի-միլէյի շրջանակները, իրենց հայրերը կ'աբարտին Բաֆրիլի կողմերը, 1916-17, ութը տարւոյ 1919 թն կիլիկիոյ վաղանցիկ աղատագրութեան օրերուն Ան-թէլայցիքը կը վերադառնան իրենց ծննդավայրը, հոն նորէն դարձ կ'երթան երկու պատանեակներ, Ան-թէլայի զիւցաղնական ինքնաշարժաշարժութեան հա-լար, երբ երկրորդ անգամ հայութիւնը տեղահան ու տարագիր կ'ըլլայ, այս անգամ Տ. Գաթիկէն եւ Տ. Ներ-սէն Քաթանաներ կը հաստատուին Սիւրիոյ, իսկ Նա-րայր եւ Ներսէս Երեստղէմ կուգան, աշակերտելու ժողովականութեան վարժարանին, որ փակուած էր պատերազմի ընթացքին, աշակերտանելուն զինու-րացրութեան եւ տարագրութեան հետեւանքով, եւ հազիւ թէ վերադառնաւ էր քանի մը աշակերտ-ներով:

Անգլիոյ զերիշխանութեամբ Պաղեստինի վրայ եւ Դուբան Երրազմի Պատրիարքութեամբ՝ նոր թուա-կան մը կը բացուէր Ս. Յակոբի ուսումնական գոր-ծին համար, ժողովրդ. վարժարանը կը բացակա-րուէր, քիչ ետքը կը հաստատուէր Կիւլալենկեան Ըն-ծայարանը, այնպէս որ Նորայր եւ Ներսէս, ժողովրդ-վարժարանին, տրուած պայմաններու մէջ շրջանը աւարտելէ ետքը, ժողովրդ. վարժարանին եւ Ընծա-յարանի միջեւ միութեան զիմ կազմող դասընթացի մը հետեւեցան Ամեն. Ս. Պատրիարք Հօր, Բարզէն եպիսկոպոսի եւ Հ. Պրիմալի մասնաւոր խնամքին տակ, եւ առիթ ունեցան նոր նիւթեր տեսնելու եւ զարգանալու:

Նորայր՝ 1923 Հիւլիս. 5-4 թն Սարկաւազ եղաւ՝ Լուսարարագիտ Մեթոդիկ եղաւ, Նշանեանի ծնուն-դով թեմամբ, իսկ Ներսէս 1926 Հիւլիս. 3 թն Սարկա-ւազ եղաւ Կիւլալենկեան Ընծայարանի ութը աշա-կերտներուն զլուրը, Ս. Պատրիարք Հօր ձեռնադրու-թեամբ:

Երկուրն ալ անմիջապէս ուսուցչական պաշտօնի կոչուեցան նախ Քաղաքացւոյ՝ Նախախթարանին մէջ, իսկ յետոյ ժողովրդ. վարժարանին մէջ, նոյն ատեն Նորայր Սարկաւազին յանձնուեցաւ Ս. Աթո-սիոս առաջիկ զիրերու մասնաւորաբար պատգա-նութիւնը՝ Անգլիանիկ Սարկաւազի հետ: Իսկ Ներսէս Սարկաւազ Պատրիարքարանին Դիւանատան մէջ նոր հաստատուած Ս. Տեղեաց րաժնին բարեօրոգիս տն-ուանուեցաւ, զատեր ստանձնելով նաեւ ժողովրդ. վարժարանի նորակազմ Բ. Դասարանին մէջ:

### ՈՒՍՄԱՆՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱՎՈՐՄԱՆՈՒՄԸ

Երկու նորընծաներ Բառսուրէն ելլելէ ետքը Անգլիա պիտի երթան իրենց ուսումը կատարելա-գործելու համար: Ասանք տարի մը յառաջ գալով պիտի ըլլային՝ եթէ Ս. Պատրիարք Հօր անակնկալ հիւանդութիւնը չուր յետէ մեզ ամէն ծրագիր: Բայց ուրախ ենք որ անցան տաղանդի եւ մասնագիտ-թեան օրերը, եւ Ն. Ամեն. Սրբազնութիւնը կրցաւ նոյն իսկ զիշխարային դասերով երկու Սարկաւազները վարժեցնել յայն եւ յատեն լեզուներու տարբերուն, այնպէս որ այդ անցած տարին այս կերպով շատ

եղան, իսկ միւս կողմէն Հայր Պրիմալին մասնաւոր խնամք տարաւ զօրացնելու իրենց Անգլիներէր, որպէս զի կարող ըլլան հետեւել իրենց նոր դասե-րուն Անգլիոյ մէջ: Երկուրն ալ արդէն հիմնականէր քառական տարւոյն Անգլիներէն մը կը խօսին եւ գիտ-րութեամբ կը գրեն այդ լեզուով, եւ գտած ենք որ ամենեւին զժառարութեան պիտի չբախին իրենց ու-սումնական նոր միջավայրին մէջ:

Անգլիոյ մէջ երկու նոր տառուածարանական զարդերը հաստատուած են, որոնց նպատակն է կառավարող եկեղեցականութիւն պատրաստել Անգ-լիոյն եկեղեցւոյ պէտքերուն համար, թէ՛ նոյն ինքն Մեծ Բրիտանիոյ մէջ եւ թէ՛ գաղթավայրերու եկե-ղեցիներուն համար: Այս զարդերէն մէկը Լոնտոնի մօտիկ է Փէրիամի մէջ, իսկ միւսը Մանչէսթըր մօ-տիկ, Միքսիլիայի մէջ: Մեր նորընծաները պիտի եր-թան այս վերջին զարդը, որու պաշտօնական անունն է College of the Resurrection: Այս երկու զարդերն՝ տառուածարանական քարոյր հաստատութիւններ են, առանձին կեանքով, բնէք եւրոպական տեսակ մը վանքեր, ապառնով ամէն վտանգներէ եւ փորձանք-ներէ, որ եկեղեցականութեան պատրաստուողներ ոչ միայն կ'ստանան լաւ ուսում, այլ նաեւ կը վար-ժուին լարբաշտութեան, վստե զի խոտամբեր կենցաղ մը կերակուր ամէն միջոց ձեռք տանուած է. կա-նոնաւոր ուսում, ազօթք, մարզանք, ինքնապատ-յան ծանոթութիւն տնտեսական եւ սննեկի պէտքերուն, սեղանատան մէջ իսկ իրարու կ'ապաստարեն ուս-նողներ, եւայլն:

Միքսիլիայի Գոլէժը հինգ տարուան շրջան մը ու-նի, որուն առաջին երեքը ուսանողներ կը նուիրեն Էլիոյ Համալսարանին ու եւ տարիման մը առնելու, իսկ երկու տարին յետ-շրջանաւարտի դասընթացը մըն է գտաւ տառուածարանական:

Մեր երկու նորընծաներ այս վերջին երկու տար-ուան դասընթացքին պիտի հետեւին, եւ նոյն ատեն պիտի ընտրեն իրենց մասնագիտութիւնները, որ-պէս զի երբ վերադառնան Ս. Աթոս՝ կարող ըլլան Ընծայարանի մէջ ստանձնել մասնագիտական դասեր:

Մեր ժողովրդ. վարժարանը եւ Ընծայարանը որ-պէսզի համապատասխանեն մասնական պատգա-նութեան, եւ միշտ կարեւորան պահել հայ եկեղեցական զարգացի մը քարոյր մակարդակը, պէտք է ունենան մասնագիտութիւն պատրաստուած ուսուցչական մար-մին մը, ներսէն պատրաստուած եւ հասած ոյժե-րով, եւ աւագն ենք որ մեր երկու նորընծաներով այդ քայլն ալ կ'առնուի, եւ հետզհետէ կը հասնին նորեր ամէն մէկ ճիւղի եւ պէտքի համար:

Հ. Նորայր եւ Հ. Տիրան իրենց ուսանողական կեանքին մէջ եղած են աշխատասէր, ուշիմ, համ-բերտաւար, աւելին սորվելու եւ գիտնալու հետա-մուտ, կարգապահ իրենց յանձնուած գործերու եւ աշխատութեանց մէջ, բարեպաշտ եւ երկիր դաւ, այն-պէս որ անգլիական դաստիարակութեան մը հպում-ներով (retouche) կատարելապէս պատրաստուած պիտի ըլլան այն ծառայութեան, որուն կ'ապաստ-ենք իրենց Alma Mater Ս. Տիգրիսի մէջ:

Մեր սէրը, մեր ազօթքը՝ իրենց յաջողութեան համար, երթան քարոյր:

## ԿԻՒԼՊԵՆԿԱՆՅ ՅԻՇԱՍԱԿԻՆ

Ս. Պատրիարք Հայրը իր վարդապետի պայծառացուցիչ բարոյգինմէջ երախտագիտութեամբ և օրհնութեամբ յիշատակեց լինձայարանին Բարերար Տիար Պատրիկ Կիւլպէնկեանի ազնուական նպատարը, Ս. Աթոռիս մէջ լինձայարանի մը բացումը յաղցոյցնելու համար, և զիտեղ տուաւ որ հակառակ մեր բարի փափաքներուն զերթէ անհնար պիտի ըլլար հաստատել լինձայարանը, եթէ Կիւլպէնկեանի բարերար ձեռքը չերկննար մեզիս Դրուսանց համայն Կիւլպէնկեան գերդաստանի ազգաբնակիչներուն ու առատաձեռնութիւնը, կսկիծով յիշեց Տիար Պատրիկի սիրելի եղբոր Կիւլպէնկեան և զաւկին Սերովէի կենդանութեամբ, և երկար ու առողջ կեանք մաղթեց Կիւլպէնկեանց ողջերուն համար: Ս. Պատարագէն անմիջապէս ետքը կատարուեցաւ Կիւլպէնկեանց յիշատակին սահմանուած տարեկան Նոգեհանգիտար, որ փակուեցաւ Ս. Պատրիարք Հօր սրտայայտ Հոգաւորով:

Իսկ երեկոյին միաբանութեան սեղանատան մէջ Նոգեհանց տրուեցաւ Ս. Աթոռիս Միաբանութեան և բոլոր աշխատաւորներուն, Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ, որուն հրաւիրուած էին նաև երկու նորընծաներ և իրենց Արմ. քահանայ Հայրերը, ինչպէս նաև Տ. Յովհաննէս Քահանայ Էքմէքճեան, որ ուխտի համար ընկերացած էր Հայկական իրեն կարգապիշ եղբայրներուն:

Սեղանի ընթացքին Պարեն. Փոխանորդ Սրկտիշ Եպօ. Աղաւնուռի խօսեցաւ և զրուսանց Տիար Պատրիկ Կիւլպէնկեանի Բարերարութիւնը Ս. Աթոռիս լինձայարանին և սրտագին մաղթանքներ բրաւ Բարերարին արեւշատութեան համար: Յետոյ Բարեկէն Սրբազան ոտը կ'ըլաւ և զրուսանց Նոգիներուն նուիրումը ազգին և եկեղեցւոյն համար, ողջունեց երկու նորընծաներուն նուիրումը և մուտքը Հայաստանեայց Եկեղեցւոյ ծառայութեան մէջ, և բաւ թէ այսպիսի նուիրումով երկուստեք իրար հակադրուած ընդհանրապէս չեն ընդհանրուիր: Ս. Աթոռիս մէջ, և ակնարկելով Կիւլպէնկեան զատարանի սարկուազներուն բոսաւ, ահա՛ երկու տարիէն անոնք ալ պատրաստուած պիտի ըլլան: Ձեռք բարեմաղթութիւններ ըրաւ Հայց. Եկեղեցւոյ հաստատութեան և Ամեն. Ս. Պատրիարք Հօր համար, և բաւ թէ թո՛ղ ազամանդի առողջութեամբ աղբի Սրբազան Հայրը իր Աթոռին վրայ, որ այսպիսի արժանաւոր Զեռնագրութիւններով պայծառացնէ Ս. Եկեղեցին:

Յետոյ մէյ մէկ սիրուն և իմաստայից ուղերձներ ըրին Արմ. Տ. Ներսէս և Տ. Գարեգին: Հայրեր:

Տ. Ներսէս յայտնեց թէ ինքը խօսք մը լուսնի հոս ըսելիք, այլ ունի երախտագիտութիւն մը Ամեն. Ս. Պատրիարք Հօր, որ զիտեղ տուաւ, ժամանակին եթէ իմ վրայ աշխատած չըլլար, ևս այսօր հոս պիտի չըլլայի և իմ անդրանիկ

զաւակս պիտի չկրնայի նուիրել Ս. Եկեղեցւոյ ծառայութեան: Ս. Պատրիարքը տակէ 25 տարի յառաջ, իր Արմաշի վանահայրութեան, երկու քուկէս տարի շարունակ, իր զատեղէն զուր, շաբաթը երկու գիշեր, երկու ժամ աշխատած է վրաս, և ես այդ աշխատութեան շնորհիւ եղայ, ինչ որ եղայ: Ենթադրեցէք որ ես ազգատիկ մարդ մըն էի և յանկարծ ինձի հազար ոսկի տրուեցաւ, ևս այդ գումարը լաւ գործածեցի, աղբիցայ, առատացայ, և ահա տոկոսներով այսօր կը վերադարձնեմ զայն Ս. Պատրիարք Հօր: Շատ անկեղծ, շատ զեղեցիկ պատկեր մըն էր այս որ Տ. Ներսէս հօր հատիկ հատիկ խօսքերով կը շինուէր մտքերու մէջ:

Տ. Գարեգին Հայր խօսեցաւ յետոյ և բաւ, ևս բարձր գոյրցեց չեմ տեսած. բայց լաւ միջավայրի մը մէջ գտնուած եմ հօրս նման, որ իր կարգին լաւ շրջանակի մը մէջ կրցած է ծառայել Աթոռի հայրութեան լուսաւորութեան գործին:

Ես այսօր Պետրոս Առաքեալի զգացումները ունեցայ եկեղեցւոյ մէջ. երբ Ս. Պատրիարք Հայրը կը քարոզէր, կ'ըսէի ինքնիրեն. ա՛հ, շատ լաւ է այս տեղը, հոս մնա՛ք, տաղաւարներ չինենք, լսենք միշտ այս աղուոր խօսքերը, վայելեմք այս սուրբ տեսարանը: Եւ ուրիշ եմ որ հոս եմ ես ալ և իմ Նորայրս կը նուիրեմ Առաւմտյան սեղանին, ուրախութիւնս մեծ է, և կը մաղթեմ որ Առաւմտեւ հաստատ պահէ Ս. Աթոռը, երկար և առողջ կեանքով փառաւորէ մեր Ս. Պատրիարքը այդ Աթոռին վրայ, որ լուսաւորէ այս ազգը, այս եկեղեցին, և սեղանատան առաջադրոյ ջանքերուն պէս, և Լուսաւարապետ Սրբազանին ակնարկելով, բաւ գուք ալ միշտ այսպէս լուսաւորէք Ս. Աթոռը:

Ձեռնագրին և տնեղագրին ծափերով ողջունուեցան այս խօսքեր և ուղերձներ, փառանգաւոր տպք երգեր երգեցին:

Սեղանին ետքը զարմեալ կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն մը, և Ս. Պատրիարք Հայրը անգամ մըն ալ բաւ Հոգաւոր մասնաւորապէս յիշատակելով Կիւլպէնկեանց նշնեցեալները, և փառանգաւորաց զաշնածայն Հայր մերով փակուեցան վարդապետի հաղթութիւնները Ս. Յակոբայ մէջ:

## ԹԱՐԴԱՐԱՆՈՒՄ ՏՈՒՆ

Մեր առաջին Թարգմանչաց, Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի ամենին առթիւ երգի եւ խօսքի հանդէս մը սարկուեցաւ ժառանգաւորաց Աւրմառանին օրընդին մէջ, Յուլիս Տ. Կիրակի երեկոյ ժամը փն: Բաւական թաղմութիւն կ'ուր Հանդէսին նախագահեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը՝ իր շուրջ ունենալով Միաբանութեան անդամները:

Նմանեալ Մովսէսի շարականով բացուեցաւ հանդէսը, երաժշտապետ Տիար Լիւսն Ձիլինկիրանի աւաղնորդութեամբ եւ ամէն ծառէ ու արտասանութենէ ետքը ընտիր երգեր երգեցին մեր փառանգաւորները:

Առաջին խօսողն էր ժոնզրց. Վրժնի. ուսուցիչներէն Տիար Գ. Մխաթան, որ հայերէն գիրերու գիւտէն աւելի հայ գիրը փառաւորեց: Գրգ. դաստանէն Սանգիան Ումտան արտասանեց Ս. Մետրապի Մահր (Աւօն), Բրգ. Դասարանէն Արշակ Գալստեան արտասանեց Չարենցին Եւս Իմ անուշ Հաստատեցին, Դրգ. դասարանէն Վարդգէս Պատմական հորիւնէն կարգաց գրոց գիւտին պատմութիւնը, Դրգ. դասարանէն Ղազարոս Տիշէլքէնեան ինքնագիր հաւաք կարգաց Սահակ-Մետրապի գործին շարք, իսկ Կիւպէլիկեան դասարանէն (Բնծայարան) Ներսէս Մրկ. Տէր Սիւրբան փորրիկ ուսումնասիրութիւն մը կարգաց ջոյց տալու համար թէ նախամետրապեան գիրեր չկային: Դրգ. Դասարանէն Յարութիւն Պօղոսեան յաջորդէն արտասանեց Ս. Պատրիարք Զօր քերթաւաններէն Օշակեան:

Բարգէն Սրբազան խօսեցաւ սա՛ Նիւթին վրայ, Եւթէ Խայրէկ գիր չուցեցինք՝ Ի՞նչ պիտի բլլայինք հիմայ, մասնանիշ բնէյով անգրով՝ ժողովուրդներու վիճակը, եւ բացատրելով հայ ժողովուրդին գոյութեան մէջ հայերէն գիրերուն կատարած կենսական դերը:

Ամէնէն ետքը խօսեցաւ Ամեն. Ս. Պատրիարք Լայրը, ՄՏԲԻ ՏՕՆին վրայ. հայ ժողովուրդը, բաւ, ուզեց գիրը, այս քնդոնուր պահանջքն զանցում տալու համար աշխատեցաւ Ս. Մետրապ. հայ ժողովուրդը մանծրացած էր ասորի եւ յայն բնթերցուածներէն. աւ իր բնիկ լեզուն ունէր, եւ իր բնիկ լեզունին գիրերը ուզեց ուն, եւ այս կամըն էր որ հետեւ տուաւ մեր այբուրենը: Կէս ժամաւ չափ խօսեցաւ Ն. Ամեն. Սրբազանութիւնը, իր բիւրեղ հայերէնով, եւ մասնանիշ բնէյով շինեալ զարացին շէնքը, բաւ, այդ նոր շէնքին մէջ էր որ երուսաղէմի հայ փորրիկները պիտի սարվին զրկ Մետրապեան գիրերով, անաններ թէ ո՛րչափ պիտի օգտուին ծրնորքներ այս առիթէն, եւ զերծ շուկայիկ հաշիւներէ, ամէնէն յառաջ իրրեւ հայ պիտի կրթել տուն իրենց զաւակները, փոխանակ օտար զարացներ զրկու զանոնք:

## ԱՄԱՎԱԵՐՋԻ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ժառանգաւորաց Վարժարանին եւ Բնծայարանին 1927-1928՝ դպրոցական շրջանին ամառը իր բնութիւնները սկսան Յուլիս 16 ԲԵ. եւ վերջացան Յուլիս 21. ԳԵ. բնծայիւնները մեծաւ մասամբ գրաւոր եղան, լեզուներու մասը եւ բանի մը նիւթեր ալ՝ բերանացի:

Մեր դպրոցին պաշտօնական լեզուն Լայրերէն է. իսկ ուսումնական լեզուն Անգլիերէն. յետոյ կուգան Ֆրանսերէն, արաբերէն եւ յունարէն:

Ս. Պատրիարք Լայրը՝ նկատելով որ Յունաստանի որբանոցներէն բնորում աղար բիլ մը յունարէն գիտեն. կարգադրեց որ անոնց դասարանը արաբերէնի տեղ յունարէն զաս առնէ, եւ այս կերպով յունարէնը մեծ յաջողութիւն ունեցաւ ժառանգաւորաց Վարժարանի այն դասարանին մէջ, որ այս տարի Դրգ. է: Այս տարի յունարէնի բնութեան

ներկայ զանուեցաւ Երուսաղէմի յոյն Հիւպատոսը, յոյն փրօֆէսորի մը հետ, եւ այնքան զո՞ք եղաւ որ իր արաբութիւնը եւ շնորհաւորութիւնները կրկին կրկին յայտնեց Ամեն. Ս. Պատրիարք Զօր իր մայրենի լեզուին սրտած կտրուորութեան համար ժոնզրց. Վարժարանին մէջ: Եւ առիթէն օգտուելով անծամը ալ յայտնեց իր շնորհակալութիւնը Ս. Պատրիարք Զօր՝ Կորնթոսի աղէականներուն եղած նպատին համար:

Ամեն. Ս. Պատրիարք Լայրը ներկայ զանուեցաւ բերանացի Բնծայիւնաց բոլորն ալ, իսկ Դրարարի բնծայիւնները անծամը բրաւ:

Շատ ուրախայի է որ դպրոցին մակարդակը զգալի կերպով բարձրացած է, եւ գիտուեցաւ մասնաւորապէս որ աղար բնգհանուր կերպով վարժուած են անգլիերէնի եւ քաւական սահուն կը խօսին:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամեն. Ս. Պատրիարք Զօր կողմէն Պարիրբին. Փոխանորդ Գեր. Տ. Մկրտիչ Եպս. Աղաւունքի, Ս. Եննդեան վանուց Տեսուչ Լոգ. Աշոտ Վրդապ. ի հետ Յունիս Յօին Բնթգեմի մէջ փոխադարձ այցելութիւն տուաւ Փերուի հիւպատոս Պրն. Սալուաթըր Սթէֆանի, որ երկու օր յառաջ անծամը այցի եկած էր Ս. Պատրիարք Զօր՝ իր Պաղեստինի հիւպատոսութեան բարձրանալուն առթիւ:

Դարձեալ, Փոխանորդ Սրբազան, Ս. Աթոռիս Թարգման Լոգ. Տրդատ վարդապետի հետ շնորհաւորական այցելութիւններ տուաւ Յուլիս 3ին, Ամենիկեան հիւպատոսարան Ամերիկայի Միացեալ Նահանգաց Անկախութեան Տօնին առթիւ, իսկ Յուլիս 11ին, Ֆրանսայի Հանրապետութեան տարեկարծին առթիւ Ֆրանսական հիւպատոսարան:

## Y. M. C. A. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

1928 Յուլիս 23, ԲԵ. երկուցեան ժամը 5 ին կատարուեցաւ Y. M. C. A. ի Երուսաղէմի Շէնքին հիմնադրութեան հանդէսը, նախազանուութեամբ Ն. Վ. Պաղեստինի եւ Անգլ-Յորդանանու Բարձր Բօմիէր Լօրա Փրլումբրի եւ իր Տիկնոջ: Այս հանդէսին հրաւիրուած էին Պաղեստինի եւ Երուսաղէմի կառավարութեան բարձրաստիճան պաշտօնեաները, Ս. Քաղարիս հոգևոր պետերը: Ամեն. Ս. Պատրիարք Զօր կողմէն հանդէսին ներկայ զանուեցաւ Պարրիկ. Փոխանորդ Գեր. Մկրտիչ Եպս. Աղաւունքի, իր հետ ունեցաւ Լոգ. Տ. Կիւրեղ Վրգ. Խարայիկանը: Մկրտիչ Սրբազան ժանտակեցաւ հիմնադրի արարողութեան հայերէն հաստած մը կարդալով Եսայիէն (ԻԲ. 1-3 եւ 10-12) եւ աղօթելով, ինչպէս Յունաց Ս. Պատրիարքն ալ յունարէն լեզուով, երբայիւրեմով Սաղմոս, իսկ արամեերէնով ալ Մատթայի Աւետարանէն բնթերցուածներ եղան: Պաշտամունքի քնդոնուր լեզուն Անգլիերէն էր:

Ն. Վ. Լօրա Փրլումբր արծաթ ծեփիչով տարածեց շաղախը շէնքին կեդրոնական մասին, արեւել.

ճեփապային պահին անկիւնը եւ վեթիսարի կրանիթ անկիւնարարը դուեցաւ իր տեղը:

Y. M. C. A.-ի շէնքը տեղական եւ ամերիկեան հորատարտադրութեան խարնուրդ մըն է, կը կառուցուի երուսաղէմի պարիսպներէն դուրս, արեւմտեան կողմը. **Նիկոփար** բառաւ բլրածնա տարածութեան վրայ եւ իր դիրքով կը նայի ուղակի Սիւնի վրայ. Ս. Ցախրեանց Մայրավանքը:

Ամերիկացի բարերար մը, որուն անունը զաղանի կը պահուի, կ'ըն միլիոն տալար նուիրում է շինութեան համար: Երուսաղէմի ամէնէն նոր եւ ամէնէն բնագործակ եւ շրեղ հաստատութիւններէն մէկը պիւլլայ, յաւիտենական ժայռերու վրայ ճիւղնաւած, ամբակաւոյց շէնք մը, որուն շինութեան համար կը գործածուի բնակի խնայողական (պեթոն) եւ ճիւղներէն հանուած կրանիթ բարեր՝ թնթիւ կարմիր-զեղին զարնոյ երանգով:

Այս հաստատութիւնը ամերիկեան Y. M. C. A.-ի յատուկ արդիական բոլոր բաժանումներով եւ դիւրաթիւններով օժտուած պիտի բլլայ:

## Հ. Բ. Ը. ՄԻՌԻԹԵԱՆ ԺՈՂՈՎԸ

Յունիս 23, ՇԲ. զիշեր տեղի ունեցաւ Բարեգործական Երուսաղէմի Մասնաճիւղին կողմէ սարբուած հրապարակային ժողովը՝ Երուսաղէմացի Հայոց Բ. Միութեան **Քրքրպին** մէջ, որուն նախագահեց Պարթիքցին. փոխանորդ Գեր. Մկրտիչ Եպս. Աղաւնտէր, Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէն, որ **Բարերար Անդամ** է Հ. Բ. Ը. Միութեան:

Ժողովին երաժշտական մասը անակնկալօրէն զննեցիկ էր, հայերէն եւրոպական բնակիչ երգեր երգուեցան եւ եղանակներ զարնուեցան, ջութակի եւ զանազան ընկերակցութեամբ: Քերթաւածներ աղտաւանուեցան, եւ բանաստեղծութիւններ եղան որոնց նպատակն էր հասկըցնել ժողովուրդին Հ. Բ. Ը. Միութեան բրած եւ բնկիւր գործը: Նախագահ Սերբազան յորդոր կարգաց ժողովուրդին որ բոլորուի այս ազգօգուտ հաստատութեան շուրջ:

Ցաջորդ օրերուն մէջ նոր անդամագրութեան համար եղած զիմուններ ցոյց տուին թէ ժողովը չափով մը հասած է իր նպատակին:

## OPERA CARDINAL FERRARI

Գարաիւնալ Ֆէրրարիի ծախրով եւ իր անունով **Բարձրագոյն Դպրաց** մը կառուցուած է Ս. Քաղարին Արեւմտեան կողմը, ձորէն պողոտային վրայ հոյակապ շէնք մը: Այս կրթական հաստատութիւնը, ուր հայ տղար ալ կ'ընթան, իր առաջին տարներէն շրջանաւարտներուն վկայականները տրուաւ Յունիս 29, երկուցեան ժամը 4ին, ուսանողներու կողմէ սարբուած հանդէսի մը մէջ, որուն հրաւիրուած էին նաեւ հոգեւոր պետեր: Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէն ներկայ եղաւ այս

հանդէսին Գեր. Բարզէն Սրբազան՝ Ս. Աթոռիս Թարգման Հոգ. Տրդատ վարդապետին հետ:

Դպրոցին Տեսուչը քանի մը օր ետքը անձամբ եկաւ Ս. Պատրիարք Հօր յայտնելու համար իր շրջանորհակալութիւնը, Ն. Ամեն. Սրբազնութեան ցոյց տուած հետաքրքրութեան համար հանդէպ իրենց հաստատութեան:

## ԿԱՐԿՈՒՆԵԱՆ ԳԱՏԸ

Ասիկ ճիշդ 70 տարի յառաջ Յովհաննէս Պատրիարք կը զնէ պաշտօնական անուրդով այն հողերը, որոնց աէր բլլալ ուզած է Կարկուտ անուն մէկը, խարդախ ժողովներով: Եւ 70 տարիներէ ի վեր Ս. Աթոռիս իրաւունքը պաշտպանելու համար դատաւարութիւն տեղի ունեցած է Կարկուտի եւ իր ժաւանգորդներուն ղէմ, երուսաղէմ եւ Կ. Պոլիս, թիւրք դատարաններու առջեւ եւ միշտ ճանչցուած եւ վերահաստատուած է Ս. Աթոռիս իրաւունքը այդ հողերուն վրայ, բայց միւս կողմէն Կարկուտեանք չեն դադրած յաւակնել թէ իրենք են այդ հողերուն աէրը, այնպէս որ Պաղեստինի Մեծն Բրիտանիոյ դրօշին տակ մանկէլէս ետքը, Կարկուտեանք նորէն փորձած են իրենց յաւակնութիւնը հաստատել տալ, բայց երուսաղէմի Նախնական եւ Հոգային Դատարաններուն եւ Վճարակ Աւետանին առջեւ վճռուած եւ հաստատուած է Ս. Աթոռիս կալուածատիրութեան իրաւունքը այդ հողերուն վրայ: Հակառակ կողմը սակայն վերջին փորձ մը ընելով, Լոնտոն գիւմած էր վերաբնութեան համար, եւ Վեհապետական հրամանով խնդիրը յանձնուած էր Privy Councilին:

Ս. Աթոռիս դատը ստանձնած է Լոնտոնի մէջ Անգլիացի կարող փաստաբան մը, դատավարութեան ընթացքին հարկ եղած բացարտաթիւնները տալու եւ յանելուածական վաւերագիրները ներկայացնելու համար դատաւարին, Պատրիարքարանիս զիւանապետ Տիար Կ. Նուրեան ալ Յունիս 24ին ճամբայ ելաւ Եւֆրատէն, Մարտիի զիմով Լոնտոն երթալու համար, ուր հասած է արդէն: Վտան էր որ Ս. Աթոռիս արդար իրաւունքը Բեժն Բրիտանիոյ վերին դատարանին առջեւ ալ պիտի հաստատուի վերջնականապէս եւ Պատրիարքարանը իսպառ պիտի ազատուի այս եօթանասնամեայ մղձուռնջէն:

## ՇՆՈՐԱԿԱՒԻՔ

Պալիարիոյ Արտաբին Գործոց Նախարարութիւնը. Ամեն. Ս. Պատրիարք Հօր ուղղեալ 15 Յունիս 1928 թուակիր, Համար 470—IV պաշտօնագրով մը շնորհակալութիւն յայտնած է, Պալիարիոյ երկրաշարժին առթիւ արտայայտուած ցաւակցութեանց, եւ ի նպատակ անհաշիւներուն Ս. Աթոռիս զրկուած -30- Սթէրլինգ գումարին համար: